

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա կապակցությամբ

Հարգելի ուսուցիչներ.

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ և պարտքս եմ համարում մեծարանքի ու երախտագիտության ամենաջերմ խոսքերը հղել ձեզ:

Այս տոնը թանկ է ու հիշարժան բոլորիս համար: Արդեն գեղեցիկ ավանդույթ դարձած և պետականորեն նշվող այս օրը խորին հարգանքով ու ակնածանքով հիշում ենք մեր ուսուցիչներին, դպրոցը և մեկ անգամ ևս բարձրաձայնում, որ ձեր նվիրական ու տքնաջան աշխատանքը, իրավացիորեն, արժանի է բարձր գնահատանքի ու խոնարհումի: Ձեր սերն ու գիտելիքը, ստեղծագործական ունակությունն ու կենսափորձը, ինչպես նաև հոգատարությունն ու ներողամտությունը խիստ անհրաժեշտ են՝ նոր մարտահրավերներին դիմակայող սերնդի դաստիարակման գործում:

Զարգացման փուլում գտնվող մեր երկրի համար երիցս կարևոր է ձեր ավանդը ոչ միայն պետության ապագա քաղաքացիների ձևավորման, այլև հենց պետության հզորացման գործում: Ու ձեզանից, ձեր նվիրումից է նաև մեծապես կախված, թե ինչպիսին է լինելու վաղվա Հայաստանը: Ճանաչելով ձեզ, լինելով ականատեսը ձեր նվիրումի՝ համոզված եմ՝ այն մեր երազների Հայաստանն է լինելու:

Թանկագին ուսուցիչներ, կրկին շնորհավորում եմ բոլորիդ այս հրաշալի տոնի առթիվ, մաղթում ձեզ ամուր առողջություն, ընտանեկան երջանկություն և հաջողություններ՝ ձեր չափազանց կարևոր ու հայրենանվեր աշխատանքում:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 Ս. Խաչատրյան